ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՍՆՄԱԱՊՁԲ-21/29

ք. Երևան «10» Դեկտեմբեր 2021թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ) մի կողմից, և «Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ս. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ընտրել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողը իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 53847210(հիսուներեք միլիոն ութ հարյուր քառասունյոթ հազար երկու հարյուր տաս) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական

միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն Գնորդի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և

արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ
Ք. Երևան, Կառավարական տուն 2	ք. Երևան, Տերյան 91
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 9000110005130	Հ/Հ 220553331129000
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 01501418
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	Տնօրեն՝
---------- Կ. Գասպարյան	---------- Ս. Հովհաննիսյան
/ստորագրություն/ Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1
«20» 05 2021թ. կնքված
ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ-21/29 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժին	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ Դասակարգման (CPV)	Ապրանքի						
		Անվանումը, ապրանքային նշանը	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը	միավորի գինը, ՀՀ դրամ	ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետը
1	22111110-39	Դասագիրք-1	**Գնման առարկա է հանդիսանում «Մաթեմատիկա 1» դասագիրքը , 1-ին մաս /1-ին դասարանի դասագիրք-տետր/, հեղ. Վ.Հովհաննիսյան, Վ.Սարգսյան** **Բովանդակային չափանիշներ** Առաջին դասարանի առաջին կիսամյակի համար նախատեսված է գիրք-տետր: Անհրաժեշտ է, որ դասագիրք-տետրումառաջադրանքներն ու հասկացությունները հստակ ձևակերպված լինեն: Դասագիրքը պետք է բաղկացած լինի նախաթվային բաժնից, որում կուսումնասիրվեն այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են գույնը, ձևը, չափը, նյութը և 1-ից 10 թվերին վերաբերող բաժնից: Դասագիրքը պետք տրոհված լինի թեմաների, անհրաժեշտ է բովանդակության ցանկի առկայությունը: Դասագիրք-տետրն ուսանելուց հետո սովորողների մեջ պետք է ձևավորվեն այն գիտելիքները, կարողությունները, հմտությունները, որոնք պետք է հիմք դառնան հետագա ուսուցման համար: Նյութի ծավալը պետք է համապատասխան լինի հատկացված ժամաքանակին: Առաջադրանքները պետք է ներկայացվեն պարզից բարդ սկզբունքով: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխան լինի սովորողների տարիքային առանձնահատկություններին, անհրաժեշտ են միջառարկայական կապերը: Պատկերազարդումները պետք է համադրված լինեն տեքստին՝ ներառելով սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր: **Տեխնիկական չափանիշները** Ստանդար՝ 60 x 84 x 1/8, 108 էջ, 4 + 4 գույն Տեխնիկական ցուցանիշները՝ թուղթ օֆսեթ, 80 գ Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինաց. Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով	հատ	1204	1420	1709680	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

2	22111110-42	Դասագիրք-2	**Գնման առարկա է հանդիսանում «Մաթեմատիկա 1» դասագիրքը 2-րդ մաս /1-ին դասարանի դասագիրք/, հեղ.՝ Վ.Հովհաննիսյան, Վ.Սարգսյան, Ռ.Հովսեփյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրք-տետրով աշխատանքն ավարտելուց հետո սովորողները գործ ունեն արդեն դասագրքի հետ: Այստեղ ուսումնասիրվում են երկրորդ տասնյակի թվերը՝ 10-ից մինչև 20, երեխաները պատկերացում են ստանում ընդհանրապես երկնիշ թվերի, դրանց կազմության, կլոր թվերի մասին: Նրանք խորացնում են իրենց ծանոթությունը տարբեր մեծություններին՝ երկարություն, ժամանակ, զանգված, տարողություն, և մի քանի կարևոր չափման միավորների՝ դեցիմետր (սանտիմետրին աշակերտներն արդեն ծանոթացել են առաջին կիսամյակում), ժամ, կիլոգրամ, լիտր: Բացի այդ՝ երեխաները յուրացնում են թվաբանական կարևորագույն գործողությունները՝ գումարումը և հանումը (20-ի սահմաններում), խնդիր, խնդրի պայման, խնդրի հարց (հարցադրում) առանցքային հասկացությունները, սովորում են լուծել, ինչպես նաև՝ կազմել պարզ խնդիրներ:Դասագրքում նույնպես մեծաթիվ են գունեղ, տպավորիչ պատկերազարդումները, երեխաներին առաջարկվում են ոչ քիչ թվով հետաքրքրաշարժ և կատակ խնդիրներ ու խաղ-խնդիրներ, երկրաչափական ուսանելի առաջադրանքներ: Հատուկ ուշադրություն է հատկացվել տրամաբանությունն ու ստեղծագործական երևակայությունը զարգացնող առաջադրանքներին, որոնք բավականին մեծաթիվ են ու բազմատեսակ:Բովանդակությունը տրոհված է դասերի, որոնցից յուրաքանչյուրը, որպես կանոն, սկսվում է նոր էջից: Դասն սկսվելիս առաջադրանքների համարակալումը նույնպես սկսվում է 1-ից ու առանձնացվում կարմիր գույնով: Առկա է բովանդակության ցանկ:Նյութի ծավալը համապատասխանում է ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Առաջադրանքները հնարավորություն են ընձեռում կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ: Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները, նպատակային են, համադրված են տեքստին՝ ներառելով երեխայի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր ինչը սովորողների համար ավելի գրավիչ է դարձնում առարկայի ուսումնառությունը: **Տեխնիկական չափանիշները** Ստանդարտ՝ 70 x 100 x 1/16, 116 էջ, 4 + 4 գույն Տեխն.ցուցանիշներ՝ թուղթ օֆսեթ, 70 գր, Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինացվ. Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով	հատ	777	1300	1010100	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

3	22111110-59	Դասագիրք-3	**Գնման առարկա է հանդիսանում «Մաթեմատիկա 3» դասագիրքը /3-րդ դասարանի դասագիրք/, 1-ին մաս, հեղինակներ՝ Վ.Հովհաննիսյան, Ս.Հարությունյան, Վ.Սարգսյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրքն սկսվում է «Երկրորդ դասարանում անցած նյութի կրկնությունից», պարունակում է մեկ խոշոր բաժին՝ «Բազմանիշ թվեր, թվագրության ոչ դիրքային համակարգեր» և ևս մեկ խոշոր բաժնի՝ «Թվաբանական գործողություններ բազմանիշ թվերի հետ», մեծ մասը, որոնք, ըստ առարկայական ծրագրի, ներառում են այդտեղ շարադրված բոլոր թեմաները՝ նպաստելով առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների, ինչպես նաև այդ չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը համապատասխանում է ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Խնդիրներն ու վարժությունները ներկայացված են պարզից բարդ սկզբունքով, նյութերն ու առաջադրանքները հնարավորություն են ընձեռում կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ:Բովանդակության բարդության աստիճանը համապատասխանում է սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին, շարադրանքը մատչելի է, ապահովված են տեսական և գործնական նյութերի համամասնությունը, նաև՝ միջառարկայական կապերը «Մայրենի», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների հետ: Այսպես՝ դասագրքում առկա են խնդիրներ, որոնք վերաբերում են աշխարհի կենդանական և բուսական աշխարհին, Հայաստանի բնությանը՝ լեռներին, լճերին, քաղաքներին, նշանավոր շինություններին և այլն, նաև՝ սպորտին ու աշակերտների առօրյա կյանքին: Դրանով իսկ սովորողները հնարավորություն են ստանում հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ:Առկա են ուսումնական տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Դժվարավուն խնդիրները նշված են աստղանիշերով: Քիչ չեն տարբեր բարդությամբ տրամաբանական խնդիրները, որոնք կօգնեն զարգացնելու սովորողների համապատասխան կարողությունները:Բովանդակությունը տրոհված է թեմաների, առկա է բովանդակության ցանկ: Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները, նպատակային են, համադրված են տեքստին, ըստ անհրաժեշտության՝ առկա են համապատասխան մեկնաբանություններ: Պատկերազարդումները ներառում են սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր՝ սպորտ, առօրյա կյանք՝ դպրոց, ծնողներ, եղբայրներ և քույրեր, խաղեր ընկերների հետ, տնային տնտեսություն (այդ թվում՝ գյուղա-	հատ	479	900	431100	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

			կան վայրերում), ինչը, անշուշտ, սովորողների համար ավելի գրավիչ է դարձնում առարկայի ուսումնառությունը: **Տեխնիկական չափանիշները** Ստանդարտ՝ 70 x 100 x 1/16, 108 էջ, 4 + 4 գույն Տեխն. ցուցանիշներ՝ թուղթ օֆսեթ, 70 գր, Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինաց. Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով					
4	22111110-60	Դասագիրք-4	**Գնման առարկա է հանդիսանում «Մաթեմատիկա 3» դասագիրքը /3-րդ դասարանի դասագիրք/, 2-րդ մաս, հեղինակներ՝ Վ.Հովհաննիսյան,Ս.Հարությունյան, Վ.Սարգսյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրքը պարունակում է «Թվաբանական գործողություններ բազմանիշ թվերի հետ» խոշոր բաժնի մնացյալ մասն ու ևս մեկ խոշոր բաժին՝ «Տվյալներ, դրանց հավաքումը և մշակումը. Խնդիրներ», որոնք, ըստ առարկայական ծրագրի, ներառում է այդտեղ շարադրված բոլոր թեմաները՝ նպաստելով առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների, ինչպես նաև այդ չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը համապատասխանում է ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Խնդիրներն ու վարժությունները ներկայացված են պարզից բարդ սկզբունքով, նյութերն ու առաջադրանքները հնարավորություն են ընձեռում կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ:Դասագիրքն ավարտվում է ամբողջ տարվա ուսումնասիրված թեմաների «Կրկնությամբ»: Բովանդակության բարդության աստիճանը համապատասխանում է սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին, շարադրանքը մատչելի է, ապահովված են տեսական և գործնական նյութերի համամասնությունը, նաև՝ միջառարկայական կապերը «Մայրենի», «Ես և շրջակա աշխարհը», «Շախմատ» առարկաների հետ: Այսպես՝ դասագրքում առկա են խնդիրներ, որոնք առնչվում են երեխաներին ծանոթ հեքիաթային հերոսների՝ Քաջ Նազարի, Մաուգլիի, Յոթ թզուկների և այլոց հետ, կան առաջադրանքներ, որոնք վերաբերում են կենդանական և բուսական աշխարհին, Հայաստանի բնությանը, լճերին, քաղաքներին, նշանավոր շինություններին և այլն: Դրանով իսկ սովորողները հնարավորություն են ստանում հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ: Առկա են ուսումնական տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Դժվարավուն խնդիրները նշված են աստղանիշերով: Կան ոչ քիչ թվով տարբեր բարդությամբ տրամաբանական խնդիրներ:Բովանդակությունը տրոհված է	հատ	479	990	474210	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

			թեմաների, առկա է բովանդակության ցանկ: Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները, նպատակային են, համադրված են տեքստին, ըստ անհրաժեշտության՝ առկա են համապատասխան մեկնաբանություններ: Առաջադրանքներն ու պատկերազարդումները ներառում են սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր՝ սպորտ, առօրյա կյանք՝ դպրոց, հարազատներ, խաղեր ընկերների հետ, տնային տնտեսություն, ինչը սովորողների համար ավելի գրավիչ է դարձնում առարկայի ուսումնառությունը: **Տեխնիկական չափանիշները** Ստանդարտ՝ 70 x 100 x 1/16, 116 էջ, 4 + 4 գույն Տեխն. ցուցանիշներ՝ թուղթ օֆսեթ, 70 գր, Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինաց. Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով					
5	22111110-69	Դասագիրք-5	**Գնման առարկա է հանդիսանում «Անգլերեն 3» դասագիրքը /3-րդ դասարանի դասագիրք/, 1-ին մաս, հեղինակներ՝ Գ.Գասպարյան, Ն.Հովհաննիսյան, Հ.Քաջբերունի** **Բովանդակային չափանիշներ** Այս դասագրքի շնորհիվ իրականացվում է աշակերտի ծանոթացումը իր համար գրեթե անծանոթ լեզվին: Սովորողները ճանաչում են տառերը և հնչյունները: Դասագիրքը բաղկացած է 12 հիմնական բաժնից (Unit 1-12), որոնք, ըստ առարկայական ծրագրի, ներառում են այդտեղ շարադրված բոլոր թեմաները՝ նպաստելով առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների, ինչպես նաև այդ չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը համապատասխանում է ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Նյութերն ու առաջադրանքները հնարավորություն են ընձեռում կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ: Բովանդակության բարդության աստիճանը համապատասխանում է սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին, շարադրանքը մատչելի է, ապահովված են տեսական և գործնական նյութերի համամասնությունը, նաև՝ միջառարկայական կապերը 3-րդ դասարանում ուսուցանվող մյուս առարկաների հետ: Սովորողները նաև հնարավորություն են ստանում հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ: Առկա են ուսումնական տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքներ: Բովանդակությունը տրոհված է դասերի, առկա է բովանդակության ցանկ:Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները, նպատակային են, համադրված են տեքստին: Առաջադրանքներն ու պատկերազարդումները ներառում են սովորողի	հատ	25564	980	25052720	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

			կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր, ինչն առավել գրավիչ է դարձնում առարկայի ուսումնառությունը: Դասագիրքն ավարտվում է բառարանով՝ "Vocabulary": **Տեխնիկական չափանիշներ** Ստանդարտ՝ 70 x 100 x 1/16, 112 էջ, 4 + 4 գույն Տեխն. ցուցանիշներ՝ թուղթ օֆսեթ, 70 գր, Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինաց. Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով					
6	22111110-70	Դասագիրք-6	**Գնման առարկա է հանդիսանում «Անգլերեն 3» դասագիրքը /3-րդ դասարանի դասագիրք/, 2-րդ մաս, հեղինակներ՝ Գ.Գասպարյան, Ն.Հովհաննիսյան, Հ.Քաջբերունի** **Բովանդակային չափանիշներ** Տառաճանաչությունը ամփոփվում է 2-րդ մասում: Դասագրքում զետեղված են 3-րդ դասարանում ուսումնասիրվող մնացյալ 6 բաժինները (Unit 13-18), որոնք, ըստ առարկայական ծրագրի, ներառում են այդտեղ շարադրված բոլոր թեմաները՝ նպաստելով առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների, ինչպես նաև այդ չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը համապատասխանում է ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Նյութերն ու առաջադրանքները հնարավորություն են ընձեռում կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ: Բովանդակության բարդության աստիճանը համապատասխանում է սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին, շարադրանքը մատչելի է, ապահովված են տեսական և գործնական նյութերի համամասնությունը, նաև՝ միջառարկայական կապերը մյուս առարկաների հետ: Սովորողները նաև հնարավորություն են ստանում հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ: Առկա են ուսումնական տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքներ: Բովանդակությունը տրոհված է դասերի, առկա է բովանդակության ցանկ:Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները, նպատակային են, համադրված են տեքստին: Առաջադրանքներն ու պատկերազարդումները ներառում են սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր, ինչն առավել գրավիչ է դարձնում առարկայի ուսումնառությունը: Դասագիրքն ավարտվում է բառարանով՝ "Vocabulary": **Տեխնիկական չափանիշները** Ստանդարտ՝ 70 x 100 x 1/16, 104 էջ, 4 + 4 գույն Տեխն. ցուցանիշներ՝ թուղթ օֆսեթ, 70 գր, Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինաց.	հատ	25564	950	24285800	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

			Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով					
7	22111110-82	Դասագիրք-7	**Գնման առարկա է հանդիսանում «Մաթեմատիկա 4» դասագիրքը /4-րդ դասարանի դասագիրք/, 1-ին մաս, հեղինակներ՝ Վ.Հովհաննիսյան, Ս.Հարությունյան,Վ.Սարգսյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրքն սկսվում է նախորդ տարվա ուսումնասիրված թեմաների «Կրկնությունից» և պարունակում է մեկ խոշոր բաժին՝ «Գործողություններ բնական թվերի հետ», որը, ըստ առարկայական ծրագրի, ներառում է այդտեղ շարադրված բոլոր թեմաները՝ նպաստելով առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների, ինչպես նաև այդ չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը համապատասխանում է ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Խնդիրներն ու վարժությունները ներկայացված են պարզից բարդ սկզբունքով, նյութերն ու առաջադրանքները հնարավորություն են ընձեռում կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ: Բովանդակության բարդության աստիճանը համապատասխանում է սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին, շարադրանքը մատչելի է, ապահովված են տեսական և գործնական նյութերի համամասնությունը, նաև՝ միջառարկայական կապերը «Մայրենի», «Ես և շրջակա աշխարհը», «Շախմատ» առարկաների հետ: Այսպես՝ դասագրքում առկա են խնդիրներ, որոնք առնչվում են երեխաներին ծանոթ հեքիաթների հետ, կան առաջադրանքներ, որոնք վերաբերում են կենդանական և բուսական աշխարհին, աշխարհագրական օբյեկտներին՝ լեռներին, տարբեր երկրներին, Հայաստանի քաղաքներին և այլն: Դրանով իսկ սովորողները հնարավորություն են ստանում հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ: Առկա են ուսումնական տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Դժվարավուն խնդիրները նշված են աստղանիշներով: Քիչ չեն տարբեր բարդությամբ տրամաբանական խնդիրները, որոնք կօգնեն զարգացնելու սովորողների համապատասխան կարողությունները: Բովանդակությունը տրոհված է թեմաների, առկա է բովանդակության ցանկ: Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները, նպատակային են, համադրված են տեքստին, ըստ անհրաժեշտության՝ առկա են համապատասխան մեկնաբանություններ: Առաջադրանքներն ու պատկերազարդումները ներառում են սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր՝ սպորտ, առօրյա կյանք՝ դպրոց, ծնողներ, եղբայրներ և քույրեր, խաղեր ընկերների հետ, գնումներ	հատ	470	950	446500	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

			խանութներում, տնային տնտեսություն, ինչը, անշուշտ, սովորողների համար ավելի գրավիչ է դարձնում առարկայի ուսումնառությունը: **Տեխնիկական չափանիշները** Ստանդարտ՝ 70 x 100 x 1/16, 128 էջ, 4 + 4 գույն Տեխն. ցուցանիշներ՝ թուղթ օֆսեթ, 70 գր, Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինաց. Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով					
8	22111110-83	Դասագիրք-8	**Գնման առարկա է հանդիսանում «Մաթեմատիկա 4» դասագիրքը /4-րդ դասարանի դասագիրք/, 2-րդ մաս, հեղինակներ՝ Վ.Հովհաննիսյան,Ս.Հարությունյան, Վ.Սարգսյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրքը պարունակում է մեկ խոշոր բաժին՝ «Կոտորակներ», որը, ըստ առարկայական ծրագրի, ներառում է այդտեղ շարադրված բոլոր թեմաները՝ նպաստելով առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների, ինչպես նաև այդ չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը համապատասխանում է ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Խնդիրներն ու վարժությունները ներկայացված են պարզից բարդ սկզբունքով, նյութերն ու առաջադրանքները հնարավորություն են ընձեռում կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ:Դասագիրքն ավարտվում է «Լրացուցիչ առաջադրանքներով» և ամբողջ տարվա ուսումնասիրված թեմաների «Կրկնությամբ»:Բովանդակության բարդության աստիճանը համապատասխանում է սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին, շարադրանքը մատչելի է, ապահովված են տեսական և գործնական նյութերի համամասնությունը, նաև՝ միջառարկայական կապերը «Մայրենի», «Ես և շրջակա աշխարհը», «Շախմատ» առարկաների հետ: Այսպես՝ դասագրքում առկա են խնդիրներ, որոնք առնչվում են երեխաներին ծանոթ «Մոխրոտիկը» (Շառլ Պերրո) և այլ հեքիաթների հետ, կան առաջադրանքներ, որոնք վերաբերում են կենդանական, բուսական աշխարհին, աշխարի հրաշալիքներին, լեռներին, գետերին, թանկարժեք քարորին, տարբեր երկրներին, Հայաստանի բնությանը և այլն: Դրանով իսկ սովորողները հնարավորություն են ստանում հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ: Առկա են ուսումնական տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Դժվարավուն խնդիրները նշված են աստղանիշներով: Կան ոչ քիչ թվով տարբեր բարդությամբ տրամաբանական խնդիրներ: Բովանդակությունը տրոհված է	հատ	470	930	437100	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

			թեմաների, առկա է բովանդակության ցանկ: Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները, նպատակային են, համադրված են տեքստին, ըստ անհրաժեշտության՝ առկա են համապատասխան մեկնաբանություններ: Առաջադրանքներն ու պատկերազարդումները ներառում են սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր՝ սպորտ, առօրյա կյանք՝ դպրոց, հարազատներ, խաղեր ընկերների հետ, գնումներ խանութներում, տնային տնտեսություն, ինչը սովորողների համար ավելի գրավիչ է դարձնում առարկայի ուսումնառությունը: **Տեխնիկական չափանիշները** Ստանդարտ՝ 70 x 100 x 1/16, 104 էջ, 4 + 4 գույն Տեխն. ցուցանիշներ՝ թուղթ օֆսեթ, 70 գր, Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինաց. Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով					

1-8 - րդ չափաբաժինների համար

Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված«Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:

Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ <<Վաճառքի ենթակա չէ>> բառերը: Դասագրքերի մատակարարումն իրականացվում է Կատարողի կողմից՝ համաձայն կից բաշխման ցուցակի:Դասագրքերը և դասագիրք-տետրերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:

ԳՆՈՐԴ

---------- Վ. Գասպարյան

ՎԱՃԱՌՈՂ

---------- Մ.Հովհաննիսյան

«ԱՐԵՎԻԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО "АРЕВИК"
"AREVIK" PUBLISHING HOUSE"
01501418

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ /ընդհանուր/

Հաջորդական	Անվանումը	Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչություն	Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչ.	Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Վայոց_Ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	ԿԳՄՍՆ ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններ	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Դասագիրք «Մաթեմատիկա 1», 1-ին մաս /դասագիրք-տետր/	0	45	29	760	80	0	49	0	231	0	0	10	1204
2	Դասագիրք «Մաթեմատիկա 1» 2-րդ մաս	0	20	0	580	29	0	56	0	77	0	0	15	777
3	Դասագիրք «Մաթեմատիկա 3», 1-ին մաս	0	21	3	290	52	0	17	0	86	0	2	8	479
4	Դասագիրք «Մաթեմատիկա 3», 2-րդ մաս	0	21	3	290	52	0	17	0	86	0	2	8	479
5	Դասագիրք «Անգլերեն 3», 1-ին մաս	7751	1095	1964	1860	1513	2600	1435	3070	2197	379	1234	466	25 564
6	Դասագիրք «Անգլերեն 3», 2-րդ մաս	7751	1095	1964	1860	1513	2600	1435	3070	2197	379	1234	466	25 564
7	Դասագիրք «Մաթեմատիկա 4», 1-ին մաս	0	26	9	330	9	0	34	0	57	0	5	0	470
8	Դասագիրք «Մաթեմատիկա 4», 2-րդ մաս	0	26	9	330	9	0	34	0	57	0	5	0	470
	ԸՆԴԱՄԵՆԸ	15 502	2 349	3 981	6 300	3 257	5 200	3077	6 140	4 988	758	2 482	973	55 007

Ծանոթություն* ՀՀ ԿԳՄՍՆ ենթակա ուսումնական հաստատությունների դասագրքերը հանձնվում են Երևանի թիվ 112 ավագ դպրոց:

ԳՆՈՐԴ

_____ Վ. Գասպարյան

ՎԱՃԱՌՈՂ

_____ Լ. Հովհաննիսյան

Հավելված N 2
«20» 05 2021թ. կնքված
ՀՀԿԳՄՍՆՄԱՊՁԲ-21/29 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	Անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին, ըստ ամիսների, այդ թվում.												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	22111110-39	Դասագիրք «Մաթեմատիկա 1», 1-ին մաս /դասագիրք-տետր/							1709680	1709680	1709680	1709680	1709680	1709680	1709680
2	22111110-42	Դասագիրք «Մաթեմատիկա 1» 2-րդ մաս							1010100	1010100	1010100	1010100	1010100	1010100	1010100
3	22111110-59	Դասագիրք «Մաթեմատիկա 3», 1-ին մաս							431100	431100	431100	431100	431100	431100	431100
4	22111110-60	Դասագիրք «Մաթեմատիկա 3», 2-րդ մաս							474210	474210	474210	474210	474210	474210	474210
5	22111110-69	Դասագիրք «Անգլերեն 3», 1-ին մաս							25052720	25052720	25052720	25052720	25052720	25052720	25052720
6	22111110-70	Դասագիրք «Անգլերեն 3», 2-րդ մաս							24285800	24285800	24285800	24285800	24285800	24285800	24285800

7	22111110-82	Դասագիրք «Մաթեմատիկա 4», 1-ին մաս							446500	446500	446500	446500	446500	446500	446500
8	22111110-83	Դասագիրք «Մաթեմատիկա 4», 2-րդ մաս							437100	437100	437100	437100	437100	437100	437100

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

_____ Վ. Գասպարյան

ՎԱՃԱՌՈՂ

_____ Ս. Սարգսյան